

h.1127211  
01-05-2024թ.  
Նախընտրած ծանուցման ձևը՝  
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ԱՄ ՓԱՐԹՆԸՐԶ ԲՈՆՍԱԿԹԻՆԳ ԲԱՍՓՆԻ  
ՍՊԸ*

Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ,  
ԿԵՐԻՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ Փ., 135, 3*

[emehrabyan@ampartners.am](mailto:emehrabyan@ampartners.am) : 37441050136

## ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

**Համաշխարհային Բանկի** ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացվում է «**Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման**» (SՏԵ2) ծրագիրը: Դա զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավման ամենախոշոր ընթացքի մեջ գտնվող ծրագիրն է (ավարտը՝ 2024թ. դեկտեմբերին), որի շրջանակներում իրականացվում է Հայաստանի 41 զբոսաշրջային վայրերի ենթակառուցվածքների կառուցման կամ բարելավման աշխատանքներ: Ենթա-ծրագրերից **1-ը իրականացվել է Լոռու մարզում՝ մասնավորապես վերակառուցվել է դեպի Դենդրոպարկ տանող ճանապարհը:** Ծրագիրն իրականացվում է **Հայաստանի Տարածքային Չարգացման Հիմնադրամի կողմից:**

Մեր ընկերությունը (AM Partners խորհրդատվական ընկերություն, [www.ampartners.am](http://www.ampartners.am)) հանդիսանում է SՏԵ2 Ծրագրի մոնիտորինգի գործակալությունը: Բացի բուն մոնիտորինգի գործառնություններից՝ մենք ուսումնասիրում ենք նաև, թե ծրագրի տարածքներում քանի աշխատատեղ է ստեղծվել SՏԵ2 Ծրագրի իրականացման արդյունքում: Աշխատատեղերի գնահատման համար ընտրվել են հետևյալ տեսակի տնտեսվարող սուբյեկտները (իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր)՝ հյուրանոց, հյուրատուն/B&B, այլ զբոսաշրջային կացարաններ (ճամբարային վայրեր և այլն), տուր օպերատորներ, գիդ-զբոսավարներ, զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակներ (DMO, ինֆո-կենտրոն), առողջարաններ, ձեռագործ իրեր պատրաստողներ, զբոսաշրջային տրանսպորտային ծառայություններ մատուցողներ, զբոսաշրջային ժամանցային գործունեություն իրականացնողներ:

Ուսումնասիրությունն առավել համապարփակ իրականացնելու և առավել իրական պատկեր ստանալու նպատակով, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն վերոնշյալ տեսակների գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մասին՝ ըստ ներքևում ներկայացված ձևաչափի, որոնք գործունեություն են իրականացնում Գյուլագարակ համայնքում:

### Տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների ձևաչափ:

Տնտեսվարող սուբյեկտների անունները, ներառյալ կազմակերպատիրական ձևը	Սուբյեկտի գործունեության հասցեն	Կոնտակտային տվյալներ
---	---------------------------------	----------------------

(օրինակ՝ Xxx ՍՊԸ, կամ Xxx Կցյյան ԱԶ)	(Մարզ, բնակավայր, փողոց, շինության No)	(առկայության դեպքում)

Հարգանքով՝

ԱՄ Փարթևըրզ Բոնսալթինգ Քամփնի ՍՊԸ

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ԷԴԳԱՐ ՄԵՀՐԱԲՅԱՆ